

VIII. ՀՀ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀՀ ԱՎԾ-ԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ  
ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՓԱՍՏԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, 2014թ.-ի համար հաստատված «Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի» տարեկան ճշտված նախահաշիվների նկատմամբ փաստացի հատկացվել են.

- «Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» (01.03.02.01) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2015թ. կազմել է 880 107.71 հազ. դրամ՝ նախատեսված 885 871.80 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 99.3%-ով (2013թ.-ին՝ 98.3%): 2014թ.-ին դրամարկղային ծախսը 2013թ. համեմատությամբ աճել է 238 710.74 հազ. դրամով, որը 2013թ.-ին կազմել էր 635 141.17 հազ. դրամ:
- «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» (01.03.02.02) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2015թ. կազմել է 569 097.74 հազ. դրամ՝ նախատեսված 577 968.30 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 98.5%-ով (2013թ.-ին՝ 97.4%): 2014թ.-ին դրամարկղային ծախսը 2013թ. համեմատությամբ աճել է 225 369.18 հազ. դրամով, որը 2013թ.-ին կազմել էր 341 293.58 հազ. դրամ:
- «ՀՀ 2014թ. գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում» (04.02.01.21) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2015թ. կազմել է 140 127.51 հազ. դրամ՝ նախատեսված 141 697.00 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 98.9%-ով: 2014թ.-ին դրամարկղային ծախսը կազմել է 139 036.31 հազ. դրամ:
- «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ. ՀՀ 2014թ. գյուղատնտեսության համատարած հաշվառման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում» (11.01.01.01) ծրագրով սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2015թ. կազմել է 1 121 859.39 հազ. դրամ՝ նախատեսված 1 129 360.0 հազ. դրամի փոխարեն կամ ներկայացված հայտերի հիման վրա փաստացի ֆինանսավորումը կատարվել է 99.3%-ով: 2014թ.-ին դրամարկղային ծախսը կազմել է 1 121 372.43 հազ. դրամ:
- Միջազգային համագործակցության շրջանակում իրականացվող ծրագրերի մասով - «Մարդահամար 2011 դրամաշնորհային ծրագրի» շրջանակում մնացորդն առ 01.01.2015թ.՝ 86.24 հազ. դրամ է: «Աշխատանքի միջազգային կազմակերպության և Մաստեր-Քարդ հիմնադրամի Work 4 Youth ծրագրի» շրջանակում մուտքը կազմել է 44 030.00 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է 37 583.19 հազ. դրամ: «Գյուղատնտեսական համատարած հաշվառման անցկացման համար ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության կողմից տրամադրվող դրամաշնորհային ծրագրի» շրջանակում մուտքը կազմել է 85 114.83 հազ. դրամ, որից դրամարկղային ծախսը կազմել է 79 929.54 հազ. դրամ: